Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների նկատմամբ որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» «հունիսի» 2021թ.

ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Գևորգ Սիմոնյան (Բացակա)
Հանձնաժողովի անդամներ	Կարեն Խաչատրյան, Սմբատ Սմբատյան, Հարություն Վարդանյան, Արամ Գրիգորյան (Բացակա)
Հանձնաժողովի քարտուղար	Միհրան Համբարձումյան

1. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Կ. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ին կցված չեն **մասնագետների գրավոր համաձայնությունները ծառայությունները մատուցելու վերաբերյան, նշված մասնագետների որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները և մասնագետների կողմից տեխնիկական հսկողության բնագավառում մատուցված ծառայությունների մասին տեղեկատվություն**:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ում բացակայում է **լաբորատոր փորձարկումների պլանը՝ համաձայն ծավալաթերթի և հսկողության գրաֆիկը**:

«Մառք» ՍՊԸ

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում որպես ճարտարագետ հիդրոտեխնիկ ներկայացվել է Գուրգեն Հակոբյանը, սակայն ներկայացված փաստաթղթերիում **բացակայում է վերջինիս որակավորումը հավաստող փաստաթղթի պատճենը**:

«Շինսենտիֆիկատ» ՍՊԸ

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում որպես ճարտարագետ շինարար ներկայացվել է Արտակ Սարգսյանը, սակայն ներկայացված փաստաթղթերիում **բացակայում է վերջինիս գրավոր համաձայնությունները ծառայությունները մատուցելու վերաբերյան**:

Ինչպես նաև վերոնշյալ հավելվածին կցված չեն **մասնագետների որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները**:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/14» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մասնակիցներին առաջարկվում է **ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում** շտկել վերոնշյալ թերությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Խաչատրյան)

«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2021/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 09-ին ժամը 14:00-ին, ք. Երևան, Կատավարության տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող	_____	Կարեն Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Սմբատ Սմբատյան
	_____	Հարություն Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Միհրան Համբարձումյան